

մէջ (Ելից 3/14), ան կը ներկայանայ, որպէս «ՈՐ ԷՆ»⁴³ (յուն.՝ ho òn):

- Փիլոնի բարոյագիտութեան (տե՛ս Էջ 53), *աստուածտեսութեան* (theoptía) բաժնին մէջ տեսանք, որ Աստուծոյ մասին կարելի է ըսել միայն այն, ինչ որ Ան չէ (Ժխտական Աստուածաբանութիւն^[Ծ-21] = Negative Theology), այլ խօսքով, Աստուծոյ մասին մեր դրական բոլոր արտայայտութիւնները երբեք չեն համապատասխաներ Աստուծոյ իսկական Էութեան: Այդուհանդերձ Փիլոն *գԱստուած* բազմիցս կը կոչէ՝ «Բարի» կամ «Բարիի սկզբնաղբիւր», եւայլն...:
- Նոյնպէս «Բանը» (յուն.՝ lógos), որպէս միջնորդութեան ատեան, այնքան ալ յստակօրէն չէ բնութագրուած: Փիլոն, երբեմն Պլատոնի հետեւելով՝ «Բանը» կը ներկայացնէ որպէս Աստուծոյ *գաղափարը* ու երբեմն Ստոյիկութեան հետեւելով՝ որպէս Աստուծոյ *ներգործութեան ուժը* եւ վերջապէս «Բանը» կը ներկայացնէ նաեւ որպէս իւրայատուկ անձնաւորութիւն, մանաւանդ երբ «Բանը», հրեական իմաստով հրեշտակներուն հետ կ'առնէ:
Փիլոնի համաձայն, եթէ մէկ կողմէն *Բանը* «գերագոյն գաղափար»ն է, որ կը պարփակէ բոլոր գաղափարները ու «գերագոյն ուժ»ն է, որ կը պարփակէ բոլոր ուժերը, միւս կողմէն սակայն *Բանը* նաեւ անձնաւորուած հրեշտակապետն է, որ կը ծանուցանէ Աստուծոյ յայտնութիւնը: Այլ խօսքով, բոլորովին յստակ չէ, թէ «Բանը» կը ներկայանայ որպէս Աստուծոյ մէկ յատկանի՞շը, թէ ան իւրայատուկ *անձ*⁴⁴ (person) մըն է:



43 «ՈՐ ԷՆ».-

Աստուածաշնչեան բառակապակցութիւն մը: ... *Եւ Աստուած ըսաւ Մովսէսի, Ես եմ «ՈՐ ԷՆ»:* Եւ ըսաւ.- *այսպէս պիտի ըսես Իսրայէլի որդիներուն, զիս «ՈՐ ԷՆ» որկեց ձեզի:* (Ելից - Exodus 3/14).-

«ԵՍ ԵՄ, ՈՐ ԷՆ» – անգլ.՝ I AM WHO I AM ... գերմ.՝ ICH BIN DER ICH BIN ...

[Հայերէնի մէջ ունիւք նաեւ «ՐԷՆ» եզրոյթը, որ «Աստուած» կը նշանակէ: Թէեւ «ՐԷՆ» եզրոյթը առանձին չի գործածուիր, սակայն անկէ կազմուած են՝ րենական (= աստուածային), րենատես (= աստուածատես) եւայլն...: «ՐԷՆ» եզրոյթը յառաջացած է աստուածաշնչեան «ՈՐ ԷՆ» բացատրութենէն, ուր «ո» տառը սղած է:]

44 ԱՆՃ^[Ծ-03] (Person).-

Անձ հասկացութիւնը ունի քանի մը նշանակութիւն, ինչպէս՝ փիլիսոփայական, հոգեբանական, իրաւական, եւ ընկերա-հասարակական իմաստներ, Միջնադարուն նաեւ աստուածաբանական իմաստ, ինչպէս *Երրորդութեան* մէկ Աստուած, բայց 3 *անձ* ըլլալու հանգամանքը:

Իսկ եւրոպական լեզուներու մէջ Person եզրոյթը, շատ հաւանաբար ծագում առած է լատիներէն *persona* եզրոյթէն, որ կը նշանակէ դիմակ (դերասանի օգտագործած դիմակը, թատերաբեմին վրայ):